ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

ԳՈՌԱ ԳՐՈՒՊ ՍՊԸ-ն ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-26/88 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագիրը
1	Բիզիբորդի մեկ հատը բաղկացած է երկու հատվածից: Բիզիբորդի մեկ հատի ընդհանուր չափը՝ 180*60*100 սմ, Խաղային մասի ընդհանուր չափը՝ 180*60 սմ, որը բաղկացած է համապատասխանաբար երկու հատվածից 90*60 սմ չափերով, Հենակների բարձրությունը՝ 100 սմ, Գույնը՝ բնական փայտ կամ ըստ գնորդի պահանջի ներկված: Վահանակի հիմքը պետք է պատրաստված լինի կեչու փայտից՝ FC դասի ոչ ցածր 2/2-ից, փայտի վրա ուլտրամանուշակագույն տպագրությամբ, մանկական կահույքի և խաղալիքների համար ջրային հիմքով լաք, 4 և 6 մմ նրբատախտակից (ֆաներա) պատրաստված դինամիկ տարրեր, 4 և 6 մմ նրբատախտակից (ֆաներա) պատրաստված վերադրված (վերևի տարրեր) տարրեր, տարրերը պետք է տեղադրված լինեն գամերի վրա, պտտվող տարրերը՝ պտուտակների վրա: Դինամիկ խաղային տախտակներ՝ պատրաստված 15-16 մմ հաստությամբ նրբատախտակից (ֆաներա) ոչ ցածր 2/2 -ից; ամուր հաճարենի/կաղնու փայտ: PET 2 մմ; ապակե ուլունքներ, ներքին գունավոր նկարազարդումները կիրառվում են ուլտրամանուշակագույն տպագրությամբ՝ պենտապրինտի վրա, որակյալ մետաղական ծխնիներ: Էլեմենտների տեղադրման համար (փական, դուռ, ծխնիներ և այլն) պետք է օգտագործվեն միայն քաշող գամեր: Վահանակի հիմքը, ինչպես նաև հատակի սյուները և բոլոր մեծ տարրերը պետք է ունենան թեթև կտրվածք (վերջնական մակերես, առանց լազերային կտրվածքից առաջացած սև մուրի), ինչպես նաև թեքվածք: Բիզիբորդի կառուցվածք 1- 20 հատ, յուրաքանչյուրը բաղկացած երկու հատվածից : Դետալ 1՝ Լաբիրինթոսներ «Թվեր» փայտե բռնակներով: Պատյանային տարր փայտե հենարանների վրա: Դետալ 2՝ Շոշափելի արահետներ փայտե վազքուղիներով; վազքի տրամագիծը՝ 40 մմ, հաստությունը՝ 15 մմ: Դետալ 3՝

Խաղալիք դեկորատիվ տարր՝ Աղաց: Աղացի բարձրությունը պետք է լինի ոչ պակաս, քան 240 մմ: Տարրերի հաստությունը՝ 6 մմ: Տարրերի ծայրերը թեթև են, մաքուր, ակոսավոր (առանց լազերային կտրման սև հետքերի): Սայրերը պետք է պտտվեն: Դռան հետևում պետք է լինի գունավոր նկարազարդում: Դուռը պետք է փակվի ամուր կաղնուց/հաճարենուց պատրաստված փայտե պտտվող սկավառակով: Դուռը տեղադրվում է մեկ ծխնու վրա՝ օգտագործելով դուրս քաշվող գամեր: Դուռը պետք է ունենա փայտե բռնակ (ամուր կեչու փայտից, չներկված, լաքապատ): Դետալ 4՝ Պատյանային տարր «տուն կողպեքներով»: Գույնը՝ կապույտ: Տան չափսերը՝ 208x163x6 մմ: Այն պետք է ունենա տարբեր ձևերի և գույների 2 դուռ: Մեկ դուռը պետք է ունենա փայտե բռնակ (միատարր կեչու փայտից, չներկված, լաքապատ): Դռների հետևում սպիտակ ֆոնի վրա պետք է լինեն գունավոր նկարազարդումներ: Մեկ դուռը պետք է փակվի պտուտակով, մյուսը՝ ձգանային կողպեքով: Ձգանային կողպեքը պետք է ձուլված լինի: Բոլոր տարրերը պետք է տեղադրված լինեն դուրս քաշվող գամիկի վրա: Տան ծայրերը/կտրվածքները թեթև են, մաքուր, թեքվածքով (առանց լազերային կտրվածքի սև հետքերի): Դետալ 5՝ ReBee հաշվիչ փայտե հենարանների վրա: Պլաստիկե գնդիկներ: Գույնը՝ սպիտակ և կարմիր: Դետալ 6՝ Անջատիչ սպիտակ Դետալ 7՝ Բրգաձև քուղեր՝ ժանյակների համար նախատեսված մեծ օղակներով (6 հատ): Բուրգի բարձրությունը՝ 180 մմ: Դետալ 8՝ Բեռնատար, դուռը պետք է փակվի փականով, տարրի հաստությունը՝ 6 մմ: Դետալ 9՝ Շարժակների հավաքածու: Տրամագիծը՝ 83 մմ: Հաստությունը՝ 6 մմ: Դետալ 10՝ «Սեզոններ» բլոկ, տրամագիծը՝ 166 մմ: Դետալ 11՝ Փայտե հիշողության խաղ՝ «Գտիր զույգը» 6 զույգ նկարների համար (փայտե հենարանների վրա), յուրաքանչյուր մաս պետք է լինի լավ հղկված, ունենա թեքվածք, ծայրը պետք է լինի բաց փայտից (առանց լազերային մուրի). լիագույն պատկերը անջնջելի է առանց լազերային ուրվագծի: Մասի չափը պետք է լինի 60x60x16 մմ: Մասերի միջև պետք է լինեն գունավոր բաժանիչներ: Դետալ 12՝ Ժամացույց, տրամագիծը՝ 166 մմ: Դետալ 13՝ Պտտվող կլոր բլոկ գունավոր գնդիկներով, փայտե բռնակով, բլոկի տրամագիծը՝ 150 մմ. Բիզիբորդի պարունակություն (կարող է փոխարինվել) Ցեպ (տեքստիլ), ֆաստեքս ամրակ, երկրաչափական ձևերով շրջան, լուսացույց (իմիտացիա): Բիզիբորդի կառուցվածք 2 - 20 հատ, յուրաքանչյուրը բաղկացած երկու հատվածից: Դետալ 1՝ Լաբիրինթ «Թվեր» փայտե բռնակներով: Պատյանային տարր փայտե հենարանների վրա: Դետալ 2՝ Փայտե վազորդով թակիչ-որսիչ, վազորդի տրամագիծը՝ 70 մմ, հաստությունը՝ 15 մմ: Դետալ 3՝ Խաղալիք դեկորատիվ տարր՝ Օդային նավ: Երկու դուռ: Պտտվող պտուտակ: Դռների ետևում պետք է լինեն գունավոր նկարներ: Տարրերի չափսերը ոչ պակաս, քան 330 x 218 մմ: Տարրերի հաստությունը՝ 6 մմ: Տարրերի ծայրերը պետք է լինեն թեթև և մաքուր՝ ակոսավոր (առանց լազերային կտրման սև հետքերի): Յուրաքանչյուր դուռ պետք է տեղադրվի մեկ ծխնու վրա՝ օգտագործելով դուրս քաշվող գամեր: Դետալ 4՝ Պատյանային տարր «տուն»: Չափսը՝ ոչ պակաս, քան 179 x 220 մմ: Հաստությունը՝ 6 մմ: Տան ծայրերը/կտրվածքները պետք է լինեն թեթև, մաքուր,

	ակոսավոր (առանց լազերային կտրման սև հետքերի)։ Դետալ 5՝ Հաշվիչ (պլաստմասե)։ Պլաստմասե գնդիկներ։ Գույնը՝ սպիտակ և կարմիր։ Դետալ 6՝ Բլոկը «Считаем»-ի քանակներով Դետալ 7՝ Բրգաձև քուղեր՝ ժանյակների համար նախատեսված մեծ օղակներով (6 հատ)։ Բուրգի բարձրությունը՝ 180 մմ։ Դետալ 8՝ Մեքենա, պտուտակ, տարրի հաստությունը՝ 6 մմ Դետալ 9՝ Շարժակների հավաքածու։ Հաստությունը՝ 6 մմ Դետալ 10՝ Հեռախոս սկավառակով (իմիտացիա), սկավառակը պետք է պտտվի։ Տարրի հաստությունը՝ 4 մմ, սկավառակի հաստությունը՝ 4 մմ։ Նյութը՝ նրբատախտակ (ֆաներա)։ Դետալ 11՝ Պտտվող շրջան պատուհանով (նկարներով)։ Փայտե բռնակ։ Ցեպ(տեքստիլ), գնդիկներով պտտվող լաբիրինթոս, դեկորատիվ ամպեր։ Պետք է տրվի առնվազն մեկ տարվա երաշխիք։ Տեղադրումը պետք է իրականացվի մատակարարի կողմից։ Աշխատանքը սկսելուց առաջ պետք է ներկայացվեն բնօրինակ կնիքով անվտանգության և համապատասխանության հավաստագրերը։ Կառուցվածք 1-ի և կառուցվածք 2-ի էսքիզները կցվում են։

ПОЛНОЕ ОПИСАНИЕ

предлагаемого товара

ГОРА ГРУПП ООО в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ЪЯ-ЕЦЖЦПЗЯР-26/88 ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар
	технические характеристики
1	